

Գիտական ծրագրերի ֆինանսավորումը եղել է Գիտկոմիտեի հիմնական նպատակը. Ս. Հարությունյան



Լուսանկարը՝ «Ֆոտոլուրի»

Գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթները եղել են ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի 2012 թվականի հիմնական ուղղությունը, այս մասին այսօր հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ տարվա ընթացքում ֆինանսավորվել են հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված 6 և գիտական հետազոտությունների ծրագրերին վերաբերող մրցութային 4 ծրագիր:

«Մինչև տարեվերջ Կոմիտեն նախատեսում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթ, այդ թվում նաև ասպիրանտների անհատական աջակցության մրցույթ»- տեղեկացրեց նա:

«Հիմնական ծրագրերից են նաև գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման, գիտական թեմաների մրցույթը, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի մրցույթը և այլ միջազգային մրցույթներ», - ավելացրեց նա:

Սամվել Հարությունյանն ընդգծեց, որ Կոմիտեի աջակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների ինստիտուտը և «Գոլոս Արմենի» օրաթերթը սկսել են հրապարակել թերթին կից գիտահանրամատչելի ներդիր՝ «Մոստ» անունով, որը ընթերցողին ներկայացնում է Հայաստանում և արտասահմանում գիտության, տեխնիկայի և բժշկության ոլորտի ձեռքբերումները:

«Հայաստանի գիտական հանրությանն արդեն հասանելի են «Thomson Reuters»-ի Web of Knowledge համակարգի մի շարք ռեսուրսներ», - ասաց նա:

Սամվել Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է ավարտել AREAL լազերային զծային արագացուցչի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի պատրաստման աշխատանքները, գործարկել բարձր հաճախականության, վակուումային և ղեկավարման համակարգերի հիմնական փորձարարական ստենդներ:

**Գիտության պետական կոմիտեում ՎՊՎՆԻ հայտնաբերած խախտումները
Ժամանակավրեպ են. գիտպետկոմի նախագահ**

Գիտության կոմիտեում վերահսկիչ պալատի կողմից հայտնաբերած խախտումները ժամանակավրեպ են, քանի որ դրանք լուծված են 2010-ից, այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց գիտպետկոմի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նա նաև նշեց, որ գիտության բնագավառում մինչև 2008 թվականը լուրջ բարեփոխումներ իրականացված չեն եղել, իսկ օրենսդրական դաշտը լրամշակման կարիք ուներ:

Ըստ նրա՝ այդ տարիների ընթացքում ոլորտում կուտակվել էին բազմաթիվ խնդիրներ, որոնք վերացնելու համար էլ 2007թ-ին ստեղծվել է գիտության պետական կոմիտեն:

Հիշեցնենք, որ երեկ ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաքարյանը ԱԺ-ում հայտնել էր, որ Կոմիտեն իրականացրել է ոչ պետական կազմակերպությունների բազային ֆինանսավորում: Գիտական թեմատիկ ծրագրերի համար հատկացված միջոցները ծախսվում են տվյալ թեմայի հետ հիմնականում առնչություն չունեցող նպատակներով:

«Թեմատիկ ծրագրերի ու բազային ծրագրերի կրկնությունը մենք նկատել էինք դեռևս 2008թ-ին, բայց այս հարցում մեր գիտնականները ոչ մի մեղք չունեն: Բանն այն է, որ 1993թ-ից հետո ՀՀ-ում ընդունված էր ֆինանսավորման միայն մեկ տարբերակ՝ թեմատիկ ծրագրերի տարբերակը և բացակայում էր բազային ֆինանսավորումը», - ասաց նա:

«2005-ին հայտարարվեց, որ ծրագրերի 60%-ը լինելու է բազային, իսկ 40%-ը թեմատիկ: Ստացվեց այնպես, որ նույն խնդրով զբաղվող 10 հոգանոց խմբի մի մասը հայտնվեց բազային ֆինանսավորման մեջ, մյուսները թեմատիկ: Ակնհայտ է, որ ծրագրերի կրկնություն պետք է լիներ», - բացատրեց նախագահը:

Սամվել Հարությունյանը նշեց, որ ժամանակին թեմատիկ ծրագրերում աշխատում էին հիմնականում երիտասարդներ և ստանում մոտ 35 հազ. դրամ աշխատավարձ և իրենք այդ պահին ուղղակի իրավունք չունեին բոլորին ազատել աշխատանքից:

«Մենք խնդիրը լուծեցինք փուլ առ փուլ: 2010թ-ին մենք այդ խնդիրը ամբողջովին լուծել ենք և թեմաների կրկնությունն իսպառ բացակայում է: Դիտողությունները, որոնք արվեցին Վերահսկիչ պալատի կողմից, ամբողջությամբ բոլոր խնդիրները լուծված են: Իշխան Չաքարյանը հայտարարել էր 2008-2010թ-ի ստուգման արդյունքները», - ասաց նա:

Գիտության ֆինանսավորումը կավելանա 1 մլրդ դրամով



Մոտ ժամանակներս գիտության ոլորտում լուրջ փոփոխություններ կլինեն: Առաջիկայում՝ սեպտեմբերի 20-30-ը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում «Գիտության մասին» օրենքի վերաբերյալ քննարկումներ են սպասվում: Այդ բարեփոխումներից մեկը կվերաբերի, օրինակ, գիտնականներին տրվող թոշակներին: Այս մասին ասաց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Այսօր տարեկան մոտ 500 թեկնածու և մոտ 50-60 դոկտոր է պաշտպանում, նրանցից, սակայն, ընդամենը 10-15 տոկոսն են մտնում գիտության մեջ աշխատելու, մնացածը՝ տարբեր աստիճաններ ունեցող նախարարներ և փոխնախարարներ են, և այլք: Հիմնահարց է առաջանում, եթե այդ մարդը պաշտպանելուց հետո գիտությամբ չի զբաղվելու, ինչո՞ւ պետք է պաշտպանի և, առավել ևս, հավելյալ թոշակ ստանա: Նրանց կողքին, սակայն, կան վաստակաշատ գիտնականներ, որոնք իրոք արժանի են այդ վերաբերմունքին: Մեր նախաձեռնություններից մեկը հենց վերաբերելու է նրան, որ գիտնականն իր թոշակից բացի՝ ստանա պետության կողմից տրվող հավելավճար, եթե առնվազն 15 տարի աշխատել է գիտության բնագավառում», - ասաց Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքով՝ 2013 թվականին գիտության ֆինանսավորումը կավելանա, գիտության բյուջեն հաջորդ տարի կլինի 11,1 մլրդ դրամ, որը պետական բյուջեի ծախսային մասի մոտ 1%-ն է կազմում: Ստացվում է, որ 2012թ. համեմատ գիտությանը հատկացվող գումարը կավելանա 1 մլրդ դրամով: Տեղեկացնենք, որ ըստ Համաշխարհային բանկի տվյալների, 2009 թվականին գիտության և գիտահետազոտական աշխատանքների վրա կատարված ծախսումները (ինչպես պետության, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից) Հայաստանում կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 0.27%-ը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում այդ ցուցանիշը 1.25% է, Էստոնիայում՝ 1.44: Դե, իսկ զարգացած երկրներում, որոնց հետ հավակնում ենք ունենալ մեր գիտելիքահենք տնտեսությամբ՝ 2.5%-ից ավելի է: Օրինակ, Գերմանիայում այդ ցուցանիշը 2.82% է, Դանիայում՝ 3.02%, Ֆինլանդիայում՝ 3.96, Իսրայելում՝ ռեկորդային 4.27% է:

Գիտության ֆինանսավորման ոլորտում Վերահսկիչ պալատի (ՎՊ) հայտնաբերած խախտումները հիմնականում վերաբերում են 2008-2010թթ. գործունեությանը, որոնք ներկայացվել են ՎՊ-ի հաշվետվության մեջ: Այդ խախտումների մասին ՀՀ ԿԳՆ Գիտության

պետական կոմիտեի նախագահը «**168 Ժամի**» թղթակցի հետ զրույցում ասաց, որ բացթողումներն արդեն գրեթե ամբողջությամբ շտկվել են:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 11-ին Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանը ՀՀ Ազգային ժողովի քննարկումների ժամանակ, ներկայացնելով ՎՊ 2011թ. Հաշվետվությունը, հայտարարել էր, որ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեում առանձին դեպքերում մրցութային գիտական թեմաների անվանումները, իրականացված հետազոտությունները, ինչպես նաև՝ գիտական հրապարակումները համընկնում են բազային ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի հետ: Այսինքն, միևնույն աշխատանքների համար կրկնակի ֆինանսավորում է իրականացվել: Արդյունքում՝ կատարվել է 32,9 մլն դրամի անարդյունավետ ծախս:

Ս. Հարությունյանի խոսքով՝ այդ խնդիրները եղել են, սակայն դրանք տարիների ընթացքում գտել են իրենց լուծումը: «Օրինակ՝ հիմնարար գիտական հետազոտությունների իրականացման ծրագրերը ֆինանսավորվում են՝ անտեսելով փորձաքննության գործընթացը: Նման բան այլևս չկա, առանց լուրջ փորձի փորձագիտական եզրակացության գիտական թեմաները ֆինանսավորում չեն ստանում: Կամ, օրինակ, Կոմիտեն իրականացրել է ոչ պետական կազմակերպությունների բազային ֆինանսավորում, նման բան այլևս չկա», - ասաց Ս. Հարությունյանը՝ նշելով, որ ներկայումս Հայաստանում չկա որևէ ոչ պետական հիմնարկ, որը ֆինանսավորվի պետական բյուջեից:

Բացի այդ, խստացվել են ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ պահանջները. գիտական ծրագրերի համար մասնավոր հատվածից ոչ թե ընդամենը 10-15 % ֆինանսավորում կպահանջվի, այլև մասնավոր հատվածը գիտական արդյունքների առևտրայնացման համար պետք է ֆինանսավորում տրամադրի ոչ պակաս, քան 25%: «Գիտական արդյունքների առևտրայնացման հարցը ոչ միայն Հայաստանում է առկա, այլև ամբողջ ԱՊՀ տարածքում, նույնիսկ զարգացած երկրներում այս խնդիրը ամբողջովին վերացած չէ», - ասաց Ս. Հարությունյանը:

ԼՈՒՍԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայաստանում **AREAL** գծային արագացուցիչը կշահագործվի մինչև 2013թ. մայիս

CANDLE նախագծի շրջանակներում Հայաստանում կառուցվող AREAL գծային արագացուցիչը կսկսի գործել 2013 թվականին: Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին ընդունված որոշման համաձայն՝ Հայաստանում ստեղծվելու է CANDLE միջազգային գիտական հետազոտությունների կենտրոնը: Նախագծի նպատակն է Հայաստանում ստեղծել առնվազն հինգ փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականներն ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ և նյութեր: Արդյունքում՝ կկառուցվի շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոն, որն աննախադեպ կլինի հետխորհրդային, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում:

Վերջին շրջանում նախագծի հետ կապված բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել Գերմանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի արագացուցչային կենտրոնների ղեկավարների հետ և ձեռք բերվել համագործակցության պայմանավորվածություններ, ինչպես նաև քննարկվել AREAL գծային արագացուցչի հաջող իրականացման համար անհրաժեշտ քայլերը: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Նրա խոսքով՝ կատարված աշխատանքների արդյունքում ծրագրի առաջին փուլի՝ AREAL գծային արագացուցչի կառուցման աշխատանքների մեծ մասն արդեն իսկ կատարվել են: «Ներկայումս նախատեսվում է ավարտել AREAL գծային արագացուցչի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի պատրաստման աշխատանքները, գործարկել բարձր հաճախականության, վակուումային, վերահսկման և ղեկավարման համակարգերի հիմնական փորձարարական ստենդները, իսկ նոր սարքավորումների տեղադրման և հավաքման աշխատանքները նախատեսվում է իրականացնել արդեն նոյեմբերին», - ասաց Ս. Հարությունյանը: Նրա խոսքով՝ Հայաստանում CANDLE նախագծի համար 6,5 մլն եվրո ֆինանսավորումից 5,5 մլն-ը նվիրատվություն է դրսից:

Նշենք, որ AREAL գծային արագացուցիչը հնարավորություն կտա ստանալ փոքր էմիտանսով էլեկտրոնային փնջի գերկարճ իմպուլսներ, ինչը ժամանակակից փնջերի ֆիզիկայի և արագացուցչային տեխնիկայի հեռանկարային բնագավառներից է և գերակա ուղղություն է աշխարհի առաջատար կենտրոնների համար: Այն կարևոր գիտական և կիրառական նշանակություն կունենա ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի և նյութագիտության բնագավառների առաջատար փորձարարական հետազոտությունների համար:

CANDLE նախագիծն իրականացվում է Գերմանական DESY, շվեյցարական PSI, Սթենֆորդի SLAG կենտրոնների և Նովոսիբիրսկի Միջուկային ֆիզիկայի ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Գիտության պետական կոմիտեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ կտրամադրի 100 հայ գիտնականների

2012 թ. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն ֆինանսավորել է 10 ծրագիր: Այդ մասին այսօր Երևանում կայացած մամլո ասուլիսում հայտնեց ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի նախագահ Սամվել Հարությունյանը: «Կոմիտեն Հայ-Ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված «ԳՊԿ-ԳՀԱԿ-2011» մրցույթի արդյունքում ֆինանսավորել է 6 ծրագիր: Եվս 4 ծրագիր ֆինանսավորվել է ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական հետազոտական ծրագրերի աջակցության «ԳՊԿ-ԳՀԱԿ-2012» մրցույթի արդյունքում», - նշեց նա:

Հարությունյանը հաղորդեց, որ հայտարարվել և կազմակերպվել են Հայ-ռուսական հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ-2013» միջազգային մրցույթը, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև կնքված մտադրությունների հուշագրի շրջանակներում անցկացվող գիտական ծրագրերի մրցույթը:

Գիտպետկոմի նախագահը տեղեկացրեց, որ կոմիտեն մինչև տարեվերջ նախատեսում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթ, այդ թվում՝ ասպիրանտների անհատական աջակցություն: «Կանցկացվեն նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման գիտական թեմաների մրցույթ, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի մրցույթ և միջազգային մրցույթներ», - ասաց նա՝ հավելելով, որ կոմիտեն մտադիր է անցկացնել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման մրցույթ, որի արդյունքում ընտրված 100 գիտնականներ կստանան լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Հայաստանում «Քենդլ» ինստիտուտի 6,5 մլն եվրո ֆինանսավորումից 5,5 մլն-ը նվիրատվություն է

«Քենդլ» ինստիտուտում AREAL գծային արագացուցչի կարգաբերման և շահագործման ժամկետը 2013թ. մայիսն է: Այդ մասին այսօր Երևանում կայացած մամլո ասուլիսում հայտնեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նա հաղորդեց, որ հունիսի 26-28-ը «Քենդլ» սինխրոտրոնային հետազոտությունների ինստիտուտում կայացած AREAL լազերային բարձր հաճախականային գծային արագացուցչի միջազգային տեխնիկական փորձագիտական խորհրդի առաջին նիստի ժամանակ Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի առաջատար գիտնականներից կազմված փորձագետների հետ քննարկվել են «Քենդլ» նախագծի առաջին փուլի՝ AREAL գծային արագացուցչի հաջող իրականացման համար անհրաժեշտ քայլերը:

AREAL նախագիծն իրականացվում է Գերմանիայի և Շվեյցարիայի արագացուցչային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ, որոնք փորձագիտական աջակցությունից բացի պատրաստ են ինստիտուտին անհատույց տրամադրել ժամանակակից սարքավորումներ: AREAL-ի իրականացման ընթացքում կփորձակվեն «Քենդլ» սինխրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիմքում ընկած համակարգերը:

Գիտպետկոմի նախագահը տեղեկացրեց, որ ներկայումս նախատեսվում է ավարտել AREAL գծային արագացուցչի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի պատրաստման աշխատանքները, գործարկել բարձր հաճախականության, վակուումային, վերահսկման և ղեկավարման համակարգերի հիմնական փորձարարական սթենդները: Նոր սարքավորումների տեղադրման և հավաքման աշխատանքները նախատեսվում է կատարել նոյեմբերին:

Գիտպետկոմի ջանքերով Հայաստանում հասանելի են դարձել Web of Knowledge համակարգի որոշ ռեսուրսներ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն ամփոփել է IRMAS հայ-ֆրանսիական լաբորատորիայի 2-ամյա գործունեությունը: Ինչպես Երևանում կայացած մամլո ասուլիսում հաղորդեց ՀՀ ԿԳՆ գիտպետկոմի նախագահ Սամվել Հարությունյանը, անցած 2 տարիների ընթացքում բարձր վարկանիշ ունեցող գրախոսվող ամսագրերում և ժողովածուներում տպագրվել է 45 աշխատանք, միջազգային գիտաժողովների 40 թեզիսներ: «Նոր մակարդակի վրա է դրվել գիտական կադրերի պատրաստման խնդիրը. Համատեղ ասպիրանտուրային ծրագրում ներգրավված է 6 ասպիրանտ, որոնցից երկուսն արդեն պաշտպանել են իրենց ատենախոսությունները Հայաստանում և ստացել են թե՛ հայկական, թե՛ ֆրանսիական գիտական աստիճանի դիպլոմ: Իրագործվել է 35 փոխադարձ այցելություն՝ համատեղ գիտական աշխատանքի, ասպիրանտների պատրաստման, Հայաստանում և Ֆրանսիայում միջազգային գիտաժողովների մասնակցության համար», - նշեց նա:

Հարությունյանը տեղեկացրեց, որ կոմիտեն ամփոփել է նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման գիտական թեմաների ընթացիկ հաշվետվությունների գնահատման մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահների նիստում հաստատվել և ընդունվել են 2011-2012թթ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների ընթացիկ հաշվետվությունների փորձաքննության արդյունքները:

Բացի այդ, գիտության պետական կոմիտեն ամփոփել է «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2010» մրցույթի թեմաների տարեկան հաշվետվությունները:

Գիտպետկոմի նախագահի խոսքով՝ կոմիտեի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների ինստիտուտը և «Գոլոս Արմենիի» օրաթերթը սկսել են հրապարակել թերթին կից նոր գիտահանրամատչելի ներդիր՝ «Մոստ», որն ընթերցողին կծանոթացնի Հայաստանում և արտասահմանում գիտության, տեխնիկայի և բժշկության ձեռքբերումներին:

Կոմիտեի ջանքերով Հայաստանի գիտական հանրության համար հասանելի են Thomson Reuters-ի Web of Knowledge համակարգի մի շարք ռեսուրսներ:

**Սամվել Հարությունյան. Հայաստանի գիտական ոլորտի իրավական դաշտը
կատարելագործվել է**

Հայաստանի գիտական ոլորտի իրավական դաշտը կատարելագործվել է: Այդ մասին այսօր Երևանում կայացած մամլո ասուլիսում հայտնեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նա հաղորդեց, որ ՀՀ կառավարության 24.05.2012 N 20 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման 2012-2013թթ. միջոցառումների ծրագրին և դրա արդիականացման ժամանակացույցին, իսկ 12.01.2012 N 1 որոշմամբ՝ Հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025թթ. ռազմավարությանը և դրա արդիականացման միջոցառումների ժամանակացույցին:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը վերաբերում է ՀՀ-ում գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքներին և չափանիշներին:

Հարությունյանը տեղեկացրեց նաև, որ «Քենդլ» սինխրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ Քենդլի գործունեությունը համակարգելու համար լիազոր մարմին է նշանակվել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ինչպես նաև հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը:

**Սամվել Հարությունյան. սոցիալական խնդիրներ ունեցող գիտնականներին ճիշտ չէ
Հայաստանում պահելը (Տեսանյութ)**



Այսօր «Փաստարկ» ակումբում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ամփոփեց կոմիտեի անցած մեկ տարվա գործունեությունը:

Նա արձանագրեց, որ գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթների շրջանակում հայ-ֆրանսիական համագործակցության արդյունքում իրականացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 6, իսկ ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ անցկացվող գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության մրցույթի արդյունքում՝ 4 ծրագիր:

«Մինչ տարեվերջ կոմիտեն նախատեսում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության, գիտական եւ գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման գիտական թեմաների, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման եւ միջազգային մրցույթներ», - հայտնեց Հարությունյանը:

Տեսանյութ՝ <http://www.youtube.com/watch?v=baKOvycTHH0>

Խոսելով արդեն ամփոփված ծրագրերից, նա ասաց, որ IRMAS հայ-ֆրանսիական լաբորատորիայի երկամյա գործունեության ընթացքում բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում եւ ժողովածուներում տպագրվել է 45 աշխատանք եւ միջազգային գիտաժողովների 40 թեզիս: Կոմիտեի նախագահի հավաստմամբ՝ բարձր մակարդակի վրա է դրվել գիտական կադրերի պատրաստման խնդիրը. «Համատեղ ասպիրանտուրայի ծրագրում վերգրավված է 6 ասպիրանտ, որոնցից երկուսը ատենախոսություն է պաշտպանել Հայաստանում՝ միաժամանակ ստանալով հայկական եւ ֆրանսիական գիտական աստիճանի դիպլոմ: Բացի այդ, իրագործվել է 35 փոխադարձ այցելություն՝ Հայաստանում եւ Ֆրանսիայում միջազգային գիտաժողովների մասնակցության եւ համատեղ գիտական աշխատանքների իրականացման համար»:

Անդրադառնալով «ՔԵՆԴԼ» նախագծին՝ Սամվել Հարությունյանը նշեց, որ «ՔԵՆԴԼ» գիտահետազոտական ինստիտուտում հունիսին կայացած փորձագիտական խորհրդի առաջին նիստի ժամանակ Գերմանիայի, ԱՄՆ-ի եւ Շվեյցարիայի առաջատար գիտնականների հետ քննարկվել են «ՔԵՆԴԼ»-ի առաջին փուլի՝ AREAL գծային արագացուցչի հաջող

իրականացման համար անհրաժեշտ քայլերը: Նշենք, որ AREAL-ն իրականացվում է Գերմանիայի եւ Շվեյցարիայի արագացուցչային կենտրոնների հետ համատեղ, որոնք պատրաստ են ինստիտուտին տրամադրել սարքավորումներ:

Մամվել Հարությունյանը փաստեց, որ գիտության ոլորտում մինչ 2008թ.-ը բարեփոխումներ չեն իրականացվել. «Գիտության մասին օրենքը եւ բազմաթիվ կակոնակարգեր վերամշակման եւ փոփոխությունների կարիք ունեն: Վերահսկիչ պալատը ստուգումների արդյունքում արձանագրեց ոլորտի բոլոր թերությունները, որոնց շտկմանն ուղղվեցին ԳՊԿ-ի քայլերը: Արդյունքում քննարկման է դրվել գիտության մասին նոր, ինչպես նաեւ՝ գիտական փորձաքննության մասին օրենքը: Կարելու էր ոլորտում անկախ փորձաքննության համակարգի ներդրումը»:

Տեսանյութ՝ (Գիտության ոլորտում մինչ 2008թ.-ը բարեփոխումներ չեն եղել)

<http://www.youtube.com/embed/YLpKRe-3Cy8>

Հարությունյանի խոսքով՝ լուծվել է նաեւ թեմատիկ եւ բազային ծրագրերի կրկնության խնդիրը. «Նախկինում 710 մանր թեմաներից մնացել է 130-ը, որոնք լուրջ ֆինանսավորվում են: Ինչ վերաբերում է գիտության ֆինանսավորման ավելացմանը, 2013թ.-ին այն կաճի մեկ միլիարդով: Այն խնդիրը, որ գիտաշխատողների մի մասը ստանում է 40.000 դրամ, իր բացատրությունն ունի. բարձր աշխատավարձ ստանում են միայն որակյալ գիտնականները՝ 150-200.000 դրամ»:

Անդրադառնալով երիտասարդ գիտնականների արտահոսքին, ԳՊԿ նախագահը նշեց, որ գիտական ծրագրերի մասնակիցների երեսուն տոկոսը երիտասարդներ են. «Բայց դա բավարար չէ՝ նրանց արտասահման գնալուց ետ պահելու համար: Միաժամանակ, Հայաստանում նրանց պահելն էլ ճիշտ չէ, քանի որ գիտնականները սոցիալական խնդիրներ ունեն: Այդուհանդերձ, արտասահմանի վաստակաշատ երիտասարդ գիտնականները կներգրավվեն Հայաստանում անցկացվող գիտական աշխատանքներում»:

Լուիզա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Գիտպետկոմի նախագահն արձագանքում է Իշխան Չաքարյանի ելույթին



Կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, արձագանքելով Ազգային ժողովում Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաքարյանի ելույթին՝ ասաց, որ երեկ ներկայացվածը 2008-2010 թվականների ստուգման արդյունքներն էին:

Իշխան Չաքարյանը երեկ իր ելույթում նշել էր, որ գիտության ոլորտում հայտնաբերվել են թեմատիկ եւ բազային ծրագրերի կրկնություններ եւ անօրինական ծախսված 32 մլն դրամ:

«Հիմնարար գիտական հետազոտությունների իրականացման ծրագրերը ֆինանսավորվել են՝ անտեսելով փորձաքննության գործընթացը: Բացասական փորձագիտական եզրակացություն ստացած որոշ գիտական թեմաներ ներառվել են ֆինանսավորման ենթակա թեմաների ցանկում եւ ստացել համապատասխան ֆինանսավորում: Պայմանագրերում հիմնարար հետազոտությունների իրականացման եւ ակնկալվող արդյունքների վերաբերյալ պարտավորություններ սահմանված չեն», - նշել էր Չաքարյանը:

Այսօր հրավիրած ասուլիսում Սամվել Հարությունյանն ասաց, որ մինչեւ 2008 թվականը գիտության ոլորտում կուտակվել էին բազմաթիվ խնդիրներ, 2008-ին ստեղծվել է կոմիտեն եւ սկսել է զբաղվել դրանց լուծմամբ:

«Թեմատիկ ու բազային ծրագրերի կրկնության մասին մենք տեղյակ ենք եղել եւ զեկուցել ենք դրա մասին նաեւ վարչապետին», - ասաց Հարությունյանը: Նա հիշեցրեց, որ 1993-ից ՀՀ-ում ընդունված է եղել միայն թեմատիկ ծրագրերի ֆինանսավորումը, բազային ֆինանսավորում չի եղել, Իսկ 2005-ին հայտարարվել է, որ ծրագրերի ուղղությամբ ծախսվող գումարների 60 տոկոսը լինելու է բազային, 40 տոկոսը՝ թեմատիկ:

Այսօր արդեն թեմատիկ փոքր ծրագրերի ֆինանսավորում չկա: Թեմաների կրկնությունն արդեն բացակայում է:

«Ստուգումները մեզ համար էլ օգտակար էին», - ասաց Հարությունյանն ու հավելեց, որ հայտնաբերված բոլոր խախտումները 2010-ի վերջին վերացվել են:

Անդրադառնալով Գիտպետկոմի աշխատանքներին՝ Հարությունյանն ասաց, որ 2012-ին կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են եղել գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթները: Գիտության պետական կոմիտեն այս տարի առաջին անգամ անցկացրել է մրցույթ նաեւ հումանիտար ոլորտում: Կոմիտեն մինչեւ տարեվերջ նախատեսում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթ:

Կիրականացվի առավել ակտիվ աշխատող 100 հայ գիտնականների հավելավճարների մրցույթ

«Հաջորդ տարի նոր մրցույթ կունենանք: Կանցկացնենք առավել ակտիվ աշխատող 100 հայ գիտնականների հավելավճարների մրցույթը,- այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ, ամփոփելով ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տարեկան գործունեությունը, ասաց ԳՊԿ նախագահ Սամվել Հարությունյանը: – Նպատակն է ֆիքսել վերջին 5 տարիներին առավել հաջող արդյունքներ ցուցաբերած գիտնականներին, որոնց աշխատավարձին հավելավճարի տեսքով որոշակի գումար կավելանա: Գումարի ծավալների մասին առայժմ չեմ կարող խոսել, դա կլինի 70-100 հազար դրամի շրջանակներում»:

Հարությունյանը նշում է, որ մինչև տարեվերջ կոմիտեն նախատեսում է անցկացնել նաև այլ մրցույթներ՝ երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների անցկացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման գիտական թեմաների, կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների մրցույթները:

ankakh.com, 12.09.2012 թ.

«Մեր գիտնականները ոչ մի մեղք չունեն». Սամվել Հարությունյանը Վերահսկիչ պալատի մեղադրանքների մասին

Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը անդրադարձավ նաև Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի՝ երեկ ԱԺ-ում հնչեցված մեղադրանքներին:

Նշենք, որ Զաքարյանը [հայտարարել էր](#), որ որոշ դեպքերում բազային և թեմատիկ ֆինանսավորում ստացող ծրագրերը կրկնվել են, ինչի հետևանքով կատարվել է 32,9 մլն դրամի անարդյունավետ ծախս:

Հարությունյանը նշեց, որ անկախությունից ի վեր մինչև 2008-ը գիտության ոլորտում լուրջ բարեփոխումներ չեն եղել. «Օրենսդրական դաշտը և բազմաթիվ կանոնակարգեր լրամշակման և փոփոխման կարիք ունեին և կուտակվել էին բազմաթիվ-բազմաթիվ պրոբլեմներ, որոնք իրենց լուծմանն էին սպասում: Այդ իսկ պատճառով էլ 2007-ին ստեղծվեց Գիտության պետական կոմիտեն»:

ԳՊԿ նախագահի խոսքով՝ թեմատիկ և բազային ծրագրերի կրկնության մասին իրենք վաղուց են տեղյակ և դեռևս 2008-ին այդ մասին գեկուցել են վարչապետին:

«Այս հարցում մեր գիտնականները ոչ մի մեղք չունեն: 1993 թվականից հետո ՀՀ-ում ընդունված էր ֆինանսավորման միայն մեկ տարբերակ՝ թեմատիկ ծրագրերի ֆինանսավորումը: 2005-ին հայտարարվեց, որ ֆինանսավորման 60 տոկոսը լինելու է բազային, 40-ը թեմատիկ: Այնպես ստացվեց, որ նույն թեմայի վրա աշխատող 10 հոգանոց խմբից 6-ին մտցրին բազային ծրագրերի մեջ, 4-ը մնացին թեմատիկ ծրագրերի մեջ: Ակնհայտ է, որ բազային և թեմատիկ ծրագրերի կրկնություն պետք է լիներ,- ասում է Հարությունյանը:- Այն ժամանակ թեմատիկ ծրագրերի աշխատողները ստանում էին 30-37 հազար դրամ աշխատավարձ, և հիմնականում երիտասարդներ էին: Եթե փակեիրք ծրագրերը, անտանելի վիճակ կստեղծվեր հանրապետությունում: Բազմաթիվ երիտասարդներ կմնային առանց աշխատանքի և մեր գիտական համակարգն ամբողջությամբ կխարխլվեր»:

Հարությունյանն ասում է, որ խնդիրը փուլ առ փուլ լուծվել է և 2010-ից այլևս թեմաների կրկնության խնդիր չկա:

«Թեմատիկ մանր ծրագրեր այլևս չունենք: Վերահսկիչ պալատի կողմից նշված բոլոր խնդիրները լուծված են», - ասաց Հարությունյանը՝ հավելելով, որ Իշխան Զաքարյանը երեկ խոսել է 2008-2010 թվականների ստուգման արդյունքների մասին:

100 գիտնական կատանա լրացուցիչ ֆինանսական միջոցներ



Այսօր լրագրողների հետ հանդիպմանը ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ամփոփեց կոմիտեի անցած մեկ տարվա գործունեությունը:

Նա ասաց, որ 2012 թվականին կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են եղել Գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթները: Մասնավորապես, ֆինանսավորվել են հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված «ԳՊԿ-ԳՀԱԿ-2011» մրցույթի 6, և ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության «ԳՊԿ-ՌՀԳՀ-2012» մրցույթի 4 ծրագիր:

Հարությունյանի փոխանցմամբ, հայտարարվել և կազմակերպվել են հայ-ռուսական հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ – 2013» միջազգային մրցույթը և ՀՀ ԿԳՆ եւ Գերմանիայի կրթության եւ հետազոտությունների դաշնային նախարարության միջեւ կնքված մտադրությունների հուշագրի շրջանակներում անցկացվող գիտական ծրագրերի մրցույթը. «Մինչեւ տարեվերջ կոմիտեն նախատեսում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության, գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման գիտական թեմաների, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի, բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրման մրցույթ: Վերջինիս արդյունքում ընտրված 100 գիտնական կատանա լրացուցիչ ֆինանսական միջոցներ»:

Ֆինանսավորել են կրթական-գիտական ծրագրերը

«ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի 2012 թվականի հիմնական ուղղությունը եղել են գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթները», այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Կոմիտեի հիմնական ծրագրերից են կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված՝ հետազոտությունների նախագծերի, գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման գիտական թեմաների մրցույթները եւ այլն:

Այս տարվա առաջին ամիսների ընթացքում ֆինանսավորվել են հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված 6 եւ գիտական հետազոտությունների ծրագրերին վերաբերող մրցութային 4 ծրագրեր: Մինչեւ այս տարեվերջ Կոմիտեն ցանկանում է անցկացնել երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մրցույթ: Նախատեսվում է նաեւ ավարտել AREAL լաբերային գծային արագացուցչի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի պատրաստման աշխատանքները, գործարկել բարձր հաճախականության, վակուումային եւ ղեկավարման համակարգերի հիմնական փորձարարական ստենդներ:

Գիտպետկոմի նախագահ. Վերահսկիչ պալատի արձանագրած խախտումներն ամբողջությամբ վերացված են



Վերահսկիչ պալատի կողմից արձանագրված բոլոր խախտումները դեռևս 2010 թվականի վերջից արդեն ամբողջությամբ վերացված էին: Ասուլիսում այս մասին ասաց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ արձագանքելով ԱԺ-ում վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի կողմից ներկայացված 2008-2010 թթ. կատարած ուսումնասիրության արդյունքներին, որոնց համաձայն գիտության պետական կոմիտեում հայտնաբերվել են լուրջ խախտումներ ու ռիսկային երևույթներ, շատ դեպքերում ծախսերը հիմնավորված չեն, իսկ գիտական թեմատիկ աշխատությունների համար հատկացված գումարները (32,9 միլիոն) ծախսվել են ոչ առարկայական և այլն:

«Գիտության ոլորտում անկախությունից սկսած մինչև 2008 թվականը գրեթե ոչ մի բարեփոխում չի իրականացվել: Օրենսդրական դաշտը, գիտության մասին օրենքը լրամշակման և փոփոխման կարիք ունեն, կուտակվել էին բազմաթիվ պրոբլեմներ: Առկա խնդիրների լուծման համար 2007-ի վերջին ստեղծվեց գիտության պետական կոմիտեն: Թերացումների վերացման ուղղությամբ կատարել ենք բազմաթիվ աշխատանքներ», - ասաց նա, ապա շարունակեց, որ իրենք թեմատիկ ու բազային ծրագրերի կրկնման վերաբերյալ դեռևս 2008-ին զեկուցել էին վարչապետին, «այդ հարցում մեր գիտնականները մեղք չունեն»:

«1993 թվականից հետո Հայաստանում ընդունված էր միայն թեմատիկ ծրագրերի ֆինանսավորման տարբերակը և բացակայում էր բազային ֆինանսավորումը: 2005 թվականին հայտարարվեց, որ ծրագրերի վրա ծախսվող գումարի 60 տոկոսը լինելու է բազային, 40-ը՝ թեմատիկ: Այնպես ստացվեց, որ օրինակ, 10 հոգանոց նույն խնդրով զբաղվող խմբի անդամներից 6-ին մտցրեցին բազային ծրագրի մեջ, չորսին՝ թեմատիկ: Ակնհայտ է, որ թեմատիկ և բազային ծրագրերի կրկնություն պետք է լիներ», - մանրամասնեց գիտպետկոմի նախագահը: Նա նշեց, որ եթե փակեին թեմատիկ ծրագրերը, բազմաթիվ երիտասարդ աշխատողներ կմնային առանց աշխատանքի, գիտական համակարգն ամբողջությամբ կխախտվեր, ուստի, նրա գնահատմամբ, կայացվեց ճիշտ որոշում՝ խնդիրը լուծել փուլ առ փուլ:

Ս. Հարությունյանն ասաց, որ այսօր թեմատիկ մանր ծրագրեր չկան. Հայաստանում թեմատիկ ոլորտում ֆինանսավորվում է ընդհանուր առմամբ 210 ծրագիր, որից 130-ը՝ տեղական, թեմաների կրկնությունը իսպառ բացակայում է:

«Քենդլ» նախագծի առաջին փուլն արդեն մեկնարկել է

Արդեն սկսվել է «Քենդլ» նախագծի առաջին փուլը՝ AREAL գծային արագացուցչի շինարարությունը, որն ինտենսիվ կերպով ընթանում է ու մտադրություն կա ավարտել 2013-ի մայիսին: Այս մասին ասույիսում տեղեկացրեց ԿԳՆ Գիտական պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Համալիրում աշխատող սարքավորումների 90 տոկոսից ավելին, նրա խոսքով, ձեռք է բերվել արտերկրից նվիրատվությունների տեսքով: Ծրագրի ընդհանուր արժեքը 6,5 միլիոն եվրո է, որից 5,5 միլիոնը կրկին նվիրատվության տեսքով են ստացել:

Ս. Հարությունյանն ասաց, որ շուտով համապատասխան բանակցություններ կվարվեն Չինաստանի իշխանությունների հետ ու ամենայն հավանականությամբ, այդ երկիրն էլ կներգրավվի «Քենդլ» նախագծում: Նրա տեղեկացմամբ, համապատասխան համաձայնագիր ունեն Ռուսաստանի հետ, շուտով որոշակի առաջխաղացում կունենան նաև ԵՄ երկրների հետ բանակցություններում «Քենդլ» նախագծի ուղղությամբ:

Հիշեցնենք, որ կառավարության 2008 թվականին ընդունած որոշմամբ Հայաստանում ստեղծվելու է «Քենդլ» միջազգային գիտական հետազոտությունների կենտրոն: Նախագծի նպատակն է Հայաստանում ստեղծել առնվազն հինգ փորձարարական կայաններով գիտական կենտրոն, որտեղ գիտնականները ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ և նյութեր: Արդյունքում կկառուցվի շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոն, որն աննախադեպ կլինի հետխորհրդային, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում: